Տ. ԹԱԴԵՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՉԻՐԵԿՅԱՆՑԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՍՐԲՈՑ ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏԱՑ ԵԿԵՂԵՑՈՒՄ՝ «ՍՐԲՈՑ ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏԱՑՆ՝ ԳԱԲՐԻԷԼԻ, ՄԻՔԱՅԵԼԻ ԵՒ ԱՄԵՆԱՅՆ ԵՐԿՆԱՅԻՆ ԶՕՐԱՑՆ» ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(11 նոյեմբերի 2017 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Նա իր հրեշտակներին հոգիներ դարձրեց
եւ իր ծառաներին՝ կիզիչ հուր»
(Եբր. Ա. 7, հմմտ. Սաղմ. ՃԳ. 4):

Սիրելի՛ հավատացյալներ,

Այսօր երկնքի արքայության «փոքրիկ հոտը» ձեր խուռներամ բազմությամբ ժողովվել է այս նորակառույց Սրբոց Հրեշտակապետաց գողտրիկ եկեղեցում՝ նշելու «Սրբոց Հրեշտակապետացն՝ Գաբրիէլի եւ Միքայէլի եւ ամենայն երկնային զօրացն» տոնը:

Օրվա ընթերցվածից իմացանք, որ Աստված Իր հրեշտակներին ստեղծում է որպես «հոգի եւ կիզիչ հուր»՝ երագաթռիչ թեւածելու եւ փայլածելու երկնային անծայրածիր տարածքներով, պահպանելու եւ այցելելու երկիր մոլորակի ընտրյալ արարածներին: Իսկ ավելի ետ գնալով՝ կտեսնենք, որ Աստվածաշնչի առաջին իսկ համարը հռչակում է՝ «Ի սկզբանե Աստված ստեղծեց երկինքն ու երկիրը», այսինք՝ նախ երկինքը, ապա՝ երկիրը: Եկեղեցու հայրերը մեկնում են, որ «երկինքը» խորհրդանշում է նաեւ հրեշտակաց ինը դասերի՝ երկնաբնակների արարումը: Ուրեմն, կարող ենք ասել, որ երկինքը լուսավորվել էր նախքան Աստված կարտաբերեր Իր Բանը՝ «Թող լինի լույս» (Ծնող. Ա. 3), նախքան կստեղծեր «երկու մեծ լուսատուները»՝ արեւն ու լուսինը՝ «լուսավորելու համար երկիրը» (Ծնող. Ա. 14, 15, 17), եւ երկինքն ու երկիրը լի էին Սերովբեների եւ Քերովբեների երգակցության հնչյուններով ու պարակցության ցնծություններով, Լուսեղենների եւ Հրակերպյանների՝ Սուրբ Երրորդության ու «Փառաց Թագավորի եւ Զորությունների Տիրոջ» հրեշտակաբարբառ Երեքսրբյան օրհնաբանություններով ու փառաբանություններով...

Սակայն Գաբրիել եւ Միքայել հրեշտակապետների «Երկնային քահանայապետության» հարազվարճ բերկրության այս ներդաշնակությունը պետք է խախտվեր տիեզերաբանական մի աղետալի իրադարձությամբ: Եսայու մարգարեության ԺԴ. գլխի խորհրդաբանությունը հայտնում է, որ արարյալ առաջին հրեշտակը՝ Արուսյակը, ըմբոստանում է Աստծու դեմ եւ անկում երկնքից: Իսկ Աստվածաշնչի վերջին գրքի՝ Հովհաննու հրեշտակաբանական Հայտնության Ը.-Թ. գլուխների խորհրդաբանությունը հավելում է, որ անկյալ առաջին հրեշտակին հետեւում է հրեշտակների մեկ երրորդը, եւ այստեղից էլ սկիզբ է առնում չար ու բարի հրեշտակների միջեւ տիեզերական պատերազմը:

Սիրելի՛ հավատացյալներ, Օրհնության շարականում երգում ենք. «Լցրե՛ք անկյալ ապստամբ թշնամու տեղերը, որոնք երկնքից վայր անկան»: Այս երեւույթը աստվածաբանորեն կոչվում է «հրեշտականմանություն», «հրեշտակակերպություն», երբ Քրիստոսի Մարտնչող եկեղեցու սրբերը գալիս են լրացնելու անկյալ հրեշտակների դատարկ տեղերը երկնային Հաղթանակած եկեղեցում, եւ հրեշտակաց ինը դասերի վրա ավելանում է «մարդ-հրեշտակային» տասներորդ դասը:

Նախանցյալ տարի՝ Մեծ Եղեռնի հարյուրամյակի դարադարձին, Հայ Եկեղեցին սրբադասեց մեր բյուր-բյուրավոր նահատակներին, որոնք առավելով լեցրեցին այդ թափուր տեղերը հրեշտակաց օթեւաններում: Եվ եթե մինչ այս մենք էինք հոգեհանգստյան պաշտոն մատուցում նրանց համար, ապա այսօր այդ անհայտից հայտնի դարձած սրբերը անդադար բարեխոսում են մեր մեղավոր հոգիների փրկության եւ մարդ-հրեշտակային տասներորդ դասին անդամագրության համար:

Սիրելի՛ հավատացյալներ, այդ դատարկ տեղերը նաեւ ձեզ են սպասում, ձեր միջից անհայտ բազմաթիվ սրբեր պետք է հայտնի դառնան, բազմաթիվ «վերջիններ պետք է առաջիններ լինեն» (հմմտ. Մատթ. ԺԹ. 30), դուք բոլորդ եւ յուրաքանչյուրդ եք կոչված սրբության, որպեսզի դուք էլ, երբ ձեր ժամն ու հերթը հասնի, դառնաք մեղավոր մարդկության անմռունչ բարեխոսները...

Թող Աստված Սուրբ Հոգու շնորհներով արժանի համարի մեզ բոլորիս «ի խորոց սրտի» աղոթելու Իր Միածին Որդուն՝ Ս. Գրիգոր Նարեկացու հետ միախոհ եւ միախորհուրդ. «Դարձի՛ր դեպի ինձ եւ ողորմիր,/ անկարոտ Աստված,/ Դու, որ այնքան ծարավի ես/ ու պապակ իմ փրկությանը,/ Որ մինչեւ անգամ երկնային անմահ/ եւ օրհնաբանող զվարթուններին/ պաշտոն հանձնեցիր/ Հանուն մարդկության փրկության կարգված՝/ Քա-

հանաներ եւ քավչապետներ հավիտենական/ ի դիմաց մեր՝ երկրակենցաղներիս,/ Թշվառ լքյալիս հաշտութեան համար/ պաղատելու քեզ մշտնջենապես,-/ «Ողորմի՛ր Երուսաղեմին». որը լուսավոր/ մի խորհուրդ ունի,/ Թե այս երկրավոր Երուսաղեմի/ սույն օրինակով խնդրում են նրանք,/ Քո մեծ հայտնութեամբ/ Եվ քեզ կցորդված մարդկանցով՝/ ընկած հրեշտակների դատարկը լցնել» *(Մատյան Ողբերգության, ԼԴ., Թ.):*

Շնորհք սեր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցի ընդ ձեզ եւ ընդ ամենեսեանդ.ամէն: